Հավելված 6
«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

# <ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/2»

ք. Գորիս «03» փետրվար 2020 թ.

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Դ.Մաշուրյանի, որը գործում է <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <ԱՐՖԱՐՄԱՑԻԱ> ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Հովհաննիսյանի, որը գործում է <ԱՐՖԱՐՄԱՑԻԱ> ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6037275 /վեց միլիոն երեսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի

կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների

մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Գ Ն Ո Ր Դ

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գորիս, Գր.Տաթևացի 31
Բանկ՝ «Արդշինբանկ», Գորիս մ/6
Հ/Հ 2475700530300010
ՀՎՀՀ 09211641

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

<Արֆարմացիա> ՓԲԸ
ք. Երևան, Պուշկինի 56
<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 1*
*« 03 » փետրվար 2020 թ. կնքված*
*«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/Հ» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 1000մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 1000մլ | հատ | 160 | 1440000 | 9000 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | Համաձայն պատվերի ։ Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել | 2020 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային |
| 2 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 100մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 100մլ | հատ | 132 | 660000 | 5000 | | | |
| 3 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 250մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 250մլ | հատ | 134 | 1340000 | 10000 | | | |
| 4 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 3000մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 3000մլ | հատ | 1120 | 336000 | 300 | | | |
| 5 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 5,0մլ | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 5մլ | սրվակ | 30.5 | 30500 | 1000 | | | |
| 6 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 500մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 500մլ | հատ | 136 | 1360000 | 10000 | | | |
| 7 | 33691136 | Նատրիումի քլորիդ 10,0% 50մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ sodium chloride լուծույթ կաթիլաներարկման 100մգ/մլ, 50մլ | հատ | 504 | 50400 | 100 | | | |
| 10 | 33651125 | Ազիտրոմիցին 250մգ | Բորիսովյան | Ազիթրոմիցին azithromycin | դեղապա | 98 | 49000 | 500 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | բուժպատրաստուկների գործարան | դեղապատիճ 250մգ | տուփ | | | | | | օրվա ընթացում: |
| 11 | 33651125 | Ազիտրոմիցին 500մգ | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Ազիթրոմիցին azithromycin դեղահատ 500մգ | դեղահատ | 238 | 119000 | 500 | | | |
| 21 | 33621160 | Ամինակապրոնաթթու 50մգ/մլ լուծույթ ներարկման համար | ՖարմաՏեք | Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 250մլ | հատ | 820 | 41000 | 50 | | | |
| 54 | 33651170 | Ացիկլովիր 400մգ | Ակրիխին | Ացիկլովիր, acyclovir դեղահատ 400մգ | դեղահատ | 40.4 | 2020 | 50 | | | |
| 64 | 33671126 | Բրոմհեքսին | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Բրոմհեքսին bromhexine դեղահատ 8մգ | դեղահատ | 2.71 | 1355 | 500 | | | |
| 72 | 33691138 | Գլյուկոզայի 5% լ-թ 250մլ | ՖարմաՏեք | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 250մլ | Հատ | 132 | 132000 | 1000 | | | |
| 73 | 33691138 | Գլյուկոզայի 5% լ-թ 500մլ | ՖարմաՏեք | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 500մլ | Հատ | 136 | 476000 | 3500 | | | |

*դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

*դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
ա. 2,5 տարեկանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե իրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | <Արֆարմացիա> ՓԲԸ |
| Հացեն՝ ք. Գորիս, Գր.Տաթևացի 31 | ք. Երևան, Պուշկինի 56 |
| Բանկ՝ «Արդշինբանկ», Գորիս մ/ճ | <Հայէկոնոմբանկ> ԲԲԸ |
| Հ/Հ 2475700530300010 | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ 09211641 | ՀՎՀՀ 02505735 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
« 03 » փետրվար 2020 թ. կնքված
«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/Հ» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 1000մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 2 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 100մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 3 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 250մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 4 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 3000մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 5 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 5,0մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 6 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 500մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 7 | 33691136 | Նատրիումի քլորիդ 10,0% 50մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 10 | 33651125 | Ացիտրոմիցին 250մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 11 | 33651125 | Ացիտրոմիցին 500մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 33621160 | Ամինակապրոնաթթու 50մգ/մլ լուծույթ ներարկման համար | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 54 | 33651170 | Ացիկլովիր 400մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 64 | 33671126 | Բրոմհեքսին | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 72 | 33691138 | Գլյուկոզայի 5% լ-թ 250մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 73 | 33691138 | Գլյուկոզայի 5% լ-թ 500մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ<br>Հասցե՝ ք. Գորիս, Գր.Տաթևացի 31<br>Բանկ՝ «Արդշինբանկ», Գորիս մ/6<br>Հ/Հ 2475700530300010<br>ՀՎՀՀ 09211641<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | <Արֆարմացիա> ՓԲԸ<br>ք. Երևան, Պուշկինի 56<br><Հայէկոնոմբանկ> ԲԲԸ<br>Հ/Հ 163008100220<br>ՀՎՀՀ 02505735<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

*Հավելված N 3*
*« 03 » փետրվար 2020 թ. կնքված*
*«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/Ձ» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 03 » փետրվար 2020 թ. կնքված*
*«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/Հ» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:
КОՂՄԵРԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

# Համաձայնագիր N 1

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և <ԱՐՖԱՐՄԱՑԻԱ> ՓԲԸ -ի միջև 2020թ-ի փետրվարի 3-ին կնքված դեղորայքի գնման N «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/2» պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին

12 փետրվար 2020թ

ք. Երևան

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Դ.Մաշուրյանի, որը գործում է «Կանոնադրության» հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից և <ԱՐՖԱՐՄԱՑԻԱ> ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, (այսուհետ կողմեր) ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 2020 թ-ի փետրվարի 3 -ին կնքված N «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/2» պայմանագրի 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հանգամանքը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1. 1. Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին հաստատել Պայմանագրի ապրանքների ձեռքբերման գնման և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (Հավելված 1, Հավելված 2):

## 2. Այլ պայմաններ

2. 1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2. 2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2. 3. Համաձայնագիրը կազմված է 6 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելված1, Հավելված 2-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | <Արֆարմացիա> ՓԲԸ |
| Հասցե՝ ք. Գորիս, Գր.Տաթևացի 31 | ք. Երևան, Րաֆֆու 111 |
| Բանկ՝ «Արդշինբանկ» Գորիս մ/ճ | <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ |
| Հ/Հ 2475700653030010 | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ 09211641 | ՀՎՀՀ 02505735 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 03 » փետրվար 20 20 թ. կնքված*
**«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/2 »** *ծածկագրով կնքված պայմանագրի համաձայնագիր*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 1000մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 1000մլ | հատ | 160 | 1440000 | 9000 | Ք.Գորիս, Գր.Տաթև սգի 31 | 9000 | 12.02-25.12.2020թ. |
| 2 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 100մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 100մլ | հատ | 132 | 660000 | 5000 | Ք.Գորիս, Գր.Տաթև սգի 31 | 5000 | 12.02-25.12.2020թ. |
| 3 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 250մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 250մլ | հատ | 134 | 1340000 | 10000 | Ք.Գորիս, Գր.Տաթև սգի 31 | 10000 | 12.02-25.12.2020թ. |
| 4 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 3000մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 3000մլ | հատ | 1120 | 336000 | 300 | Ք.Գորիս, Գր.Տաթև սգի 31 | 300 | 12.02-25.12.2020թ. |
| 5 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 5,0մլ | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 5մլ | սրվակ | 30.5 | 30500 | 1000 | Ք.Գորիս, Գր.Տաթև սգի 31 | 1000 | 12.02-25.12.2020թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 500մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 500մլ | հատ | 136 | 1360000 | 10000 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 10000 | 12.02-25.12.2020թ. |
| 7 | 33691136 | Նատրիումի քլորիդ 10,0% 50մլ | ՖարմաՏեք | Նատրիումի քլորիդ sodium chloride լուծույթ կաթիլաներարկման 100մգ/մլ, 50մլ | հատ | 504 | 50400 | 100 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 100 | 12.02-25.12.2020թ. |
| 10 | 33651125 | Ազիտրոմիցին 250մգ | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 250մգ | դեղապատիճ | 98 | 49000 | 500 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 500 | 12.02-25.12.2020թ. |
| 11 | 33651125 | Ազիտրոմիցին 500մգ | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Ազիթրոմիցին azithromycin դեղահատ 500մգ | դեղահատ | 238 | 119000 | 500 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 500 | 12.02-25.12.2020թ. |
| 21 | 33621160 | Ամինակապրոնաթթու 50մգ/մլ լուծույթ ներարկման համար | ՖարմաՏեք | Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 250մլ | հատ | 820 | 41000 | 50 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 50 | 12.02-25.12.2020թ. |
| 54 | 33651170 | Ացիկլովիր 400մգ | Ակրիխին | Ացիկլովիր, acyclovir դեղահատ 400մգ | դեղահատ | 40.4 | 2020 | 50 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 50 | 12.02-25.12.2020թ. |
| 64 | 33671126 | Բրոմհեքսին | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան | Բրոմհեքսին bromhexine դեղահատ 8մգ | դեղահատ | 2.71 | 1355 | 500 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 500 | 12.02-25.12.2020թ. |
| 72 | 33691138 | Գլյուկոզայի 5% 1-ը 250մլ | ՖարմաՏեք | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 250մլ | Հատ | 132 | 132000 | 1000 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 1000 | 12.02-25.12.2020թ. |
| 73 | 33691138 | Գլյուկոզայի 5% 1-ը 500մլ | ՖարմաՏեք | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 500մլ | Հատ | 136 | 476000 | 3500 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | 3500 | 12.02-25.12.2020թ. |

*դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

*դեղի պիտանիության ժամկետները զնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը`
ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է` հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում` առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | <Արֆարմացիա> ՓԲԸ |
| Հասցե` ք. Գորիս, Գր. Տաթևացի 31 | ք. Երևան, Րաֆֆու 111 |
| Բանկ` «Արդշինբանկ» Գորիս մ/6 | <<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ |
| Հ/Հ [illegible] | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ 09211641 | ՀՎՀՀ 02505735 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
« 03 » փետրվար 20 20 թ. կնքված
«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/2 » ծածկագրով կնքված պայմանագրի համաձայնագիր

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 1000մլ | 130880 | 261760 | 392640 | 523520 | 654400 | 785280 | 916160 | 1047040 | 1177920 | 1308800 | 1440000 | 1440000 |
| 2 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 100մլ | 59400 | 118800 | 178200 | 237600 | 297000 | 356400 | 415800 | 475200 | 534600 | 594000 | 660000 | 660000 |
| 3 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 250մլ | 120600 | 241200 | 361800 | 482400 | 603000 | 723600 | 844200 | 964800 | 1085400 | 1206000 | 1340000 | 1340000 |
| 4 | 33691136 | Նատրիումի քլորիդ | 30240 | 60480 | 90720 | 120960 | 151200 | 181440 | 211680 | 241920 | 272160 | 302400 | 336000 | 336000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 0,9% 3000մլ | | | | | | | | | | | | |
| 5 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 5,0մլ | 2745 | 5490 | 8235 | 10980 | 13725 | 16470 | 19215 | 21960 | 24705 | 27450 | 30500 | 30500 |
| 6 | 33691136 | Նատրիումի քլորիդ 0,9% 500մլ | 123624 | 247248 | 370872 | 494496 | 618120 | 741744 | 865368 | 988992 | 1112616 | 1236240 | 1360000 | 1360000 |
| 7 | 33691136 | Նատրիումի քլորիդ 10,0% 50մլ | 4536 | 9072 | 13608 | 18144 | 22680 | 27216 | 31752 | 36288 | 40824 | 45360 | 50400 | 50400 |
| 10 | 33651125 | Ազիտրոմիցին 250մգ | 4410 | 8820 | 13230 | 17640 | 22050 | 26460 | 30870 | 35280 | 39690 | 44100 | 49000 | 49000 |
| 11 | 33651125 | Ազիտրոմիցին 500մգ | 10710 | 21420 | 32130 | 42840 | 53550 | 64260 | 74970 | 85680 | 96390 | 107100 | 119000 | 119000 |
| 21 | 33621160 | Ամինակապրոնաթթու 50մգ/մլ լուծույթ ներարկման համար | 3280 | 6560 | 9840 | 13120 | 16400 | 19680 | 22960 | 26240 | 29520 | 32800 | 41000 | 41000 |
| 54 | 33651170 | Ացիկլովիր 400մգ | 161.6 | 323.2 | 484.8 | 646.4 | 808 | 969.6 | 1131.2 | 1292.8 | 1454.4 | 1616 | 2020 | 2020 |
| 64 | 33671126 | Բրոմհեքսին | 121.95 | 243.9 | 365.85 | 487.8 | 609.75 | 731.7 | 853.65 | 975.6 | 1097.55 | 1219.5 | 1355 | 1355 |
| 72 | 33691138 | Գլյուկոզայի 5% լ-թ 250մլ | 11880 | 23760 | 35640 | 47520 | 59400 | 71280 | 83160 | 95040 | 106920 | 118800 | 132000 | 132000 |
| 73 | 33691138 | Գլյուկոզայի 5% լ-թ 500մլ | 42160 | 84320 | 126480 | 168640 | 210800 | 252960 | 295120 | 337280 | 379440 | 421600 | 476000 | 476000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Գ Ն Ո Ր Դ**

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գորիս, Գր.Տաթևացի 31
Բանկ՝ «Արդշինբանկ» Գորիս մ/6
Հ/Հ 2475700555300010
ՀՎՀՀ 09211641

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

<Արֆարմացիա> ՓԲԸ
ք. Երևան, Րաֆֆու 111
<<Հայէկոնոմբանկ> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735

(ստորագրություն)
Կ.Տ